ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/40, 04.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ

Պատվիրատու՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3»

Գնման առարկան՝ հացի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 28.03.2022թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված «Սուսաննա Խաչատրյան» Ա/Ձ-ին 1-6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշումը,
2. պարտավորեցնել 1-6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Բողոք բերող անձ՝ ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ -ի տնօրեն՝ Աշոտ Ավետիսյան

Ն/ք՝ N 000763763,տրվ. 03.12.2012թ 050-ի կողմից

Սպասարկող բանկի անվանումը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հաշվեհամարը ՝ 15100431078600

ԻՐԱՎ. ՀԱՍՑԵ՝ ՀՀ ք. Սևան,Կարեն Դեմիրճյան 5

ԳՈՐԾ. ՀԱՍՑԵ՝ ՀՀ ք. Երևան,Օհանովի 15/1

Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ sevanhac@mail.ru

Հեռախոսահամարն է՝ +(374) 91026629

Պատվիրատուի անվանումը՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ

Հասցե՝ ք. Երևան Գարեգին Նժդեհի 42

Գնման Ընթացակարգի ծածկագիրը՝ ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3

Առարկան՝ Հացի ձեռքբերում

Բ Ո Ղ Ո Ք

ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով

գնման ընթացակարգի վերաբերյալ

ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ի բողոքի առարկան, բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները և պահանջը

Բողոքի առարկան՝ ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ն մասնակցել է ա/թ մարտի 21-ին «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթին: Ըստ հրավերի՝ գնառաջարկով պահնջվում էր ներկայացնել մեկ կգ հացի համար առաջարկվող գինը: ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ն պահպանելով հրավերի պահանջը սահմանված կարգով իր հայտով ներկայացրել է գնառաջարկը՝ մեկ կգ հացի համար առաջարկելով 368 ՀՀ դրամ: Մյուս մասնակիցները 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ 1կգ հացի գինը առաջարկել են՝ շատ բարձր: Պատվիրատուն 28.03.2022թվականի թիվ 4 արձանագրությամբ, որը տեղեկագրում հրապարակվել է 30.03.2022թ-ին, օրենսդրության համաձայն արձանագրել է նաև բոլոր մասնակիցների առաջարկած գները: 1-ից 6-րդ չափաբաժինների համար արհեստականորեն մյուսների գները նվազեցված են: Միաժամանակ վերը նշված արձանագրությամբ ներկայացվել է նաև գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները, որտեղ 1-ից 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ն: Նշենք, որ Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ն 1-6-րդ չափաբաժինների համար ներկայացրել է 238837ՀՀ դրամից մինչև 1013250ՀՀ դրամ մեկ կիլոգրամ հացի համար, իսկ ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ն 368 ՀՀ դրամ:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները

ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետ

8) հայտ՝ **հրավերի հիման վրա** մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

Համաձայն ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի, այն է՝

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Բողոքի պահանջը

Ուստի ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրում է բողոքը քննող անձին համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի.

1. դադարեցնել «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հացի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՀԲՀԿ-ԳՀԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության (որոշման) <<ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ>> մասի 1-ին կետով կայացված Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ին 1-ից 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու և նույն մասի 3-րդ կետով անգործության ժամկետից հետո Սուսաննա Խաչատրյան Ա/Ձ-ին պայմանագրի նախագիծ ուղարկելու ու պայմանագիր կնքելու որոշումը:
2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերանայել իր դիրքորոշումը և 1-ից 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ ներկայացրած և ցածր գին առաջարկած ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ին:
3. **Այլ տեղեկություններ**
   - Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:
   - Ընկերության տնօրենի նույնականացման քարտի պատճենը:
   - Թիվ 4 արձանագրությունը:
   - Մյուս մասնակիցների ներկայացրած գնառաջարկների պատճենները (նշենք, որ մեր գնառաջարկը ներկայացվում է չստորագրված տարբերակով, քանի որ ստորագրվածև կնքված տարբերակը ներկայացվել է Պատվիրատուին: Անհրաժեշտության դեպքում կպահանջվի Պատվիրատուից և կտրամադրվի):
   - Հրավերից արտատպված գնային առաջարկի (հավելված 2) ձևաթուղթը:

«ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ–ի տնօրեն՝ Ա.Ավետիսյան ----------

02.04.2022թ.

Digitally signed by AVETISYAN ASHOT 3510540417
Date: 2022.04.02 19:01:50 AMT